№ 194 ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14 — 1900 — ՇԱԲԱԹ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14 № 194

ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

«Մշակի» երկու ամսվայ գինն է, Նոյեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը, ԵՐԿՈՒ ռուբլի. մէկ ամսվանը—մէկ ռուբլի։ Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն երկու ամսվայ համար 1 դոլլար, Եւրոպայի բաժանորդները—6 ֆրանկ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աչխատեցէք խուսափել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնները. Հասարակութեան անտարբերութիւնը. Օպերային ներկայացումները. Նամակ Բագուից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլօ-գերմանական հաշտութիւնը. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԱՇԽԱՏԵՑԷՔ ԽՈՒՍԱՓԵԼ

Մենք հարկաւոր ենք համարում Թիֆլիսի հասարակութեան ուշադրութիւնը դարձնել այն սխալ ընթացքի վրա, որ սկսում են ընդունել մի քանի նոր կազմակերպվող արդիւնագործական ձեռնարկութիւններ Թիֆլիսի մէջ։ Մեր խօսքը նաւթագործական նոր ընկերութիւնների մասին է։

Առաջիկայ նոյեմբերի 15-ին Բագուում պէտք է տեղի ունենայ նաւթաբեր հողերի հրապարակական աճուրդ։ Պետութիւնը նշանակել է աճուրդի համար հողեր Բիբի-Էյբաթում, Սաբունչիում, Բալախանում և Բինագադիում։ Այդ հողերից մի քանիսի վերաբերութեամբ կան փոքր ի շատէ ճիշդ նպաստաւոր տեղեկութիւններ, բայց առհասարակ անյայտ է նրանց նաւթապաշարի աստիճանը և ապագայում կարող են տեղի ունենալ մեծ հիասթափութիւններ և կորուստներ։

Այդ անորոշութիւնը՝ միացած նաւթի գների չափազանց անկման հետ, որ այժմ նկատում ենք, թելադրում են արդիւնագործական ընկերութիւններին լաւ կշռել և չափել իրանց անելիքը և վտանգի չենթարկել այն բազմաթիւ մասնակիցներին, որոնք իրանց խնայողութիւններով ցանկացել են բաժին ունենալ արդիւնագործական ձեռնարկութեան մէջ։

Իսկ Թիֆլիսում արդէն ոսկի հանքերի հեքիաթներ են պատմվում և ճարպիկները՝ հողը չը վերցրած և չը գնած՝ արդէն տոկոսներ են վերցնում իրանց նախաձեռնութեան համար։ Թիֆլիսում հիմնվել են երկու ընկերութիւններ, որոնցից մէկի բաժինները վաճառվում են վերադիր վճարով, այն է հարիւր ռուբլիանոց բաժինը հարիւր տասնհինգ, հարիւր քսան և աւելի ռուբլիով։ Իսկ դեռ ոչինչ չէ սկված, ոչինչ չէ արված, նոյն իսկ ընկերութիւնը կատարելապէս չէ կազմակերպված։

Կանցնի մի երկու ամիս, աճուրդը և նրա հետ կապված ձեռնարկութիւնները կը ստանան որոշ արտայայտութիւն։ Այն ժամանակ ի՞նչ պէտք է անեն նաւթային ընկերութեան բաժինների համար վերադիր վճարած անձինք, եթէ այդ ընկերութեանը չաջողվի ոչ հող վերցնել և ոչ մի ուրիշի ձեռնարկութեան յարել։ Մինչդեռ նախաձեռնողները արդէն իրանց գրպանները են դրել այդ վերադիր վճարները։

Եթէ ենթադրենք աւելի լաւ ելք և ընկերութեանը աջողվի լաւ հող վերցնել և աջող շահագործել, դարձեալ տգեղ փաստը կը մնայ տգեղ փաստ։ Ընկերութիւն կազմողները, նոր գործ ծրագրողները պէտք է խուսափեն սպեկուլիացիայից և միջոցներ ձեռք առնեն, որ ոչ ոք իրաւունք չունենայ բաժինների վերաբերութեամբ թղթախաղ սարքել։ Երբ որ կը կազմակերպվի արդիւնագործութիւնը, որոշ կերպով կը պարզվի ձեռնարկութեան ընթացքը, այն ժամանակ կը սկսվի բաժինների կանոնաւոր գնահատութիւնը և հասկանալի ու բացատրելի կը դառնայ գների փոփոխութիւնը։

Եթէ արդիւնագործութեան մասնակցելը, մանր դրամագլուխներով խոշոր ձեռնարկութիւններ սկսելը ցանկալի է, նոյնքան զզուելի է արդիւնագործութեան հետ կապ չունեցող շահագրգռութիւնը, դրամախաղը, սպեկուլիացիան և նրանց հետ միասին առաջ գնացող տգեղ և տխուր երևոյթները։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութիւնները սկսվեցին սեպտեմբերի 24-ից, երբ Թիֆլիսի բոլոր հայ եկեղեցիներում նշանակվեցան ծխական պատգամաւորների ընտրութիւններ։ Ծխական պատգամաւորների մեծամասնութիւնը մշակական կուսակցութիւնից էր եւ այդ պատճառով հոկտեմբերի 11-ի երեկոյեան այդ մեծամասնութիւնը, նախապատրաստական մասնաւոր ժողով կազմեց՝ ընտրելի հոգաբարձուների եւ նրանց կանդիդատների ցուցակ պատրաստելու համար։ Ժողովը, «Մշակի» խմբագիր Ա. Քալանթարի նախագահութեամբ, որոշեց 14 հոգի, որոնց ընտրութիւնը ցանկալի էր համարվում։

Այդ երեկոյ Ներսիսեան դպրոցի դահլիճում հաւաքվեցան 60 ծխական պատգամաւորներ։ Նիստը բացեց Թիֆլիսի թեմական առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը մի համառօտ ճառով, որի մէջ, չեշտելով ժողովականներին Ներսիսեան դպրոցի մատուցած ծառայութիւնները, առաջարկեց ընտրել այնպիսի հոգաբարձուներ, որոնք ծառայէին դպրոցի առաջադիմութեանը։ Ապա թերթիկներով առաջարկվեցան վեց հոգի, որոնք պիտի քուէարկվէին իբրեւ հոգաբարձուներ։ Այստեղ մենք պարտք ենք համարում արձանագրել, որ Մոսկու եկեղեցու երկու նը«չանակովի» պատգամաւորներից ներկայ էր մէկը, իսկ միւսը, բժշկապետ Ա. Բաբայեան, չէր եկել ժողովին, մի հանգամանք, որ ինչ ասել կուզէ, միանգամայն պատիւ է բերում պարոնին։

Նախ քան ընտրելիների ցանկը կազմելը, պատգամաւոր պ. Բ. Վարդանեան, խօսք խնդրելով նախագահից, պատգամաւորների մի մասի կողմից խնդրեց յայտնել Վեհափառ Կաթողիկոսին, որ ցանկալի է թողնել հոգաբարձական ընտրութիւնների քառասուն տարի գոյութիւն ունեցող կարգերը, այսինքն, որ տաներկու հոգաբարձուներ ընտրվեն, իսկ քահանաների ընտրութիւնը դարձեալ թողնվի ժողովրդին։ Նախագահը յայտնեց, որ ներկայ ժողովը միայն ընտրութիւններ կատարելու լիազօրութիւն ունի եւ այդ տեսակ հարց զարթեցնել չէ կարելի։

Թերթիկներով առաջարկված հոգաբարձական ընտրելիները քուէարկվեցան եւ ստացան հետեւեալ ձայները (դնում ենք ընտրելիներին այն կարգով, ինչպէս հաստատվում էին քուէները). Ալէքսանդր Մէլիք-Ազարեանց 45 սպիտակ, 14 սեւ, Յովհաննէս Ալիխանեան 38 սպիտակ, 21 սեւ, Յովսէփ Ամիրխանեան 36 սպիտակ, 23 սեւ, բժիշկ Կարապետ Ստեփանեան 38 սպիտակ, 21 սեւ, Ասաքել Բաբախանեան 32 սպիտակ, 27 սեւ, իշխան Արսէն Բէհբութեան 45 սպիտակ, 14 սեւ, Արշակ Բաբեան 30 սպիտակ 20 սեւ, Ալէքսանդր Քալանթարեան 26 սպիտակ, 33 սեւ, Յովսէփ Տիգրանեան 38 սպիտակ, 21 սեւ, ճարտարապետ Նիկ. Գրիգորեան 22 սպիտակ, 37 սեւ։ Հետեւաբար ընտրված համարվեցին պ.պ. Մէլիք-Ազարեան, Ալիխանեան, Ամիրխանեան, Ստեփանեան, Բէհբութեան եւ Տիգրանեան։

Հոգաբարձական կանդիդատների համար անուններ առաջարկվեցան այլ եւս ոչ թէ թերթիկներով, այլ բացարձակ։ Այդ ժամանակ ժողովին մասնակցողների թիւը իջել էր 50-ի։ Առաջարկվածներից ընտրվեցան. Արշակ Բաբեան 40, Արշակ Բարխուդարեան 33, Կարապետ Քոչարեան 38, Առաքել Բաբախանեան 37, Իսահակ Բուղդանեան 28, Բարսեղ Վարդանեան 26 ձայնով։ Հակառակ կուսակցութեան թեկնածուներ՝ ճարտարապետ Նիկ. Գրիգորեան եւ Ալէքսանդր Քալանթարեան ստացան 22 ձայն։

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Մի շաբաթ առաջ թաղեցինք ուսուցիչ Ալխազեանին։ Թաղեցինք մի մարդու, որն իր կեանքի կէսը նուիրեց հասարակութեանը, որը 30 ձիգ տարիներ կուռեց խաւարի դէմ, դաստիարակելով մեր երեխաներին։

Եւ այդ մատաղ սերունդը թաղեց, ուսերի վրա կրելով իր բազմաչխատ ուսուցչին։ Դագաղի առաջից գնում էին աշակերտները, իսկ դագաղին հետեւում էին ուսուցիչները եւ մի քանի հոգաբարձուներ։ Թաղման հանդէսը, չը նայած պաշտօնականութեանը, թողնում էր տխուր տպաւորութիւն։

Ուսուցիչը թաղվեց այնպէս, ինչպէս կը թաղվի, դիցուք, մի արհեստաւոր իր արհեստակիցների կողմից.—ուրիշ խօսքով այդ թաղումը հասարակային էր։

Մինչ հասարակութիւնը չը գիտէր այդ ուսուցչի մահը։ Տասն ու չորս տարի շարունակ հանգուցեալը ուսուցիչ է եղել միայն Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում. տասն ու չորս տարվայ ընթացքում քանի՞ հոգի աշակերտած կը լինէին նրան։ Բայց ուր էին դրանք այդ օրը. միթէ ամենքը ցրվել են դաւառները։ Ո՞ւր էին այդ աւարտածների եւ ներկայ աշակերտների ծնողները այդ օրը. միթէ դրանք բարոյապէս պարտաւոր չէին իրանց զաւակների ուսուցչի յիշատակը յարգել...

Ո՞ւր էր այդ օրը այն անհագին կաստան, որը կոչվում է քահանայութիւն, որը մնունդ է ստացել այդ դպրոցում եւ որը պարծենում է նրանով. միթէ դրանք բոլորն էլ ննջեցեալ ունէին։ Դժուար է ասել, թէ հայն ո՞րն է առաջ կորցրել՝ ինքնաճանաչութիւնը, թէ պարտաճանաչութիւնը. նա միատեսակ անտարբեր է դէպի բոլոր մտաւոր աշխատողները—լինեն նրանք ուսուցիչ, վիպասան, հրապարակախօս, բանաստեղծ, դերասան, թէ նկարիչ... փող կայ, հայն էլ կերեւայ. փող չը կայ—հայն էլ չը կայ, մեռած է։ Իսկ խեղճ ուսուցիչը, դպրոցի վարչութեան հաշւով թաղվող ուսուցիչը, ինչպէս եւ ինչով կարող էր գրաւել հասարակութեան ուշադրութիւնը... Հայ հոգեւորականը եւ վաճառականը կերեւան պատեալու այնպիսի տեղ, որտեղ իրանց կարող են ցոյց տալ—մեծ հասարակութեան մէջ (?)։ Ո՞ւր էր, վերջապէս, այդ օրը մեր ինքնահաւան, պարծենկոտ ինտելիգենցիան։

Եւ սա առաջին օրինակը չէ, որ ուսուցիչը թաղվում է իբրեւ զ ա ր հ ի։ Երջանիկ էր հանգուցեալ Ալխազեանը, որ մեռաւ դպրոցում ուսուցիչ եղած ժամանակ եւ յարգվեց իր պաշտօնակիցներից եւ աշակերտներից, ապա թէ ոչ կը թաղվէր իբր մի հասարակ մշակ (եւ այն ժամանակ գուցէ իրանք ուսուցիչներն էլ չը գային)։ Եւ իրաւ, ինչ զանազանութիւն կայ անտէր, անտիրական մշակի եւ ուսուցչի մէջ. մշակը բանում է ձեր տան չինութեան վրա, ստանում է օրավարձը եւ հեռանում, իսկ թէ որտեղ կը մեռնի եւ ինչպէս կը թաղվի, մեզ ինչ գործ։ Ուսուցիչն էլ նոյնպէս ուսուցանում է մեր որդկերանցը եւ ստանում է իր ռոճիկը—որտեղ ուզում է մեռնի, ինչպէս ուզում է թաղվի, մեզ ինչ փոյթ։

Բայց միթէ այդպէս են վերաբերվում ուրիշ ազգութիւնները դէպի իրանց մտաւոր աշխատաւորները. ոչ, այդպէս չէ։

Հեռուն չը գնանք, վերցնենք մեր դրացիներին. անցեալ տարի Թիֆլիսում վախճանվեց ուրիշ ազգութեան պատկանող մի ուսուցիչ. թաղմանը պատահմամբ ներկայ էի եւ ինձ զարմացրեց հասարակութեան այն բուռն համակրանքը, որ ցոյց տուեց հանգուցեալի յիշատակին. ներկայ էին թէ փոքր, թէ մեծ, թէ օրիորդներ, թէ տիկիններ, թէ ինտելիգենցիայի եւ թէ մամուլի ներկայացուցիչներ։ Եւ հայն դեռ էլի պարծենում է իր առաջադիմութեամբ, նա անուանում է իրան քաղաքակրթված եւ մեծամտութեամբ ծաղրում է ուրիշներին։

Գեղէօն Միրաղեանց

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Երեքշաբթի օր ներկայացրին «Ռուսլան եւ Լիւդմիլա»։ Չորեքշաբթի—«Пиковая Дама», հինգշաբթի—«Դեմօն»։

«Пиковая Дама» օպերայի առաջին ներկայացմանը Լիզայի դերը կատարել էր ուրիշ սոպրանո, իսկ այս անգամ կատարեց օր. Պապեան։ Բաւական է այս տաղանդաւոր դերասանուհու ներկայութիւնը, որպէս զի հասարակութիւնը գրաւված՝ լցվի թատրոն, ինչպէս էր այս անգամ։ Գեղարուեստի համար էլ բաւական է, որ օր. Պապեան յայտնվի բեմի վրա եւ պիէսան կը ստանայ ուրիշ կերպարանք։ Շնորհիւ օրիորդի, «Пиковая Дама»-ն այս անգամ անհամեմատ լաւ անցաւ անցեալ անգամից։ Ցանկալի կը լինէր միայն, որ Լօդիի պէս երգողներին չը լսէինք։

«Դեմօն» օպերան անցաւ թոյլ, որովհետեւ անսամբլը այնքան էլ յարմար չէր։ Համեմատելով Լօդիի հետ, Դեմօնի դերում Սվէտլով շատ եւ շատ բարձր է նրանից իր ձայնով։ Դեմօնի առաջին բառերն են՝ «Проклятый міръ» (անիծեալ աշխարհ). այս բառի երկրորդ վանկի վրա կայ միջին բեգիստրից մի բարձր, բայց եւ երկար նոտա, որը դեմօնի ներկայութեան առաջին յատկանիշն է. դեմօնները դրանով սարսափ են ազդում։ Այդ կտորը Սվէտլովին շատ աջողվեց, միւս տեղերը ոչ այնքան։ Գօրեանինով ազդեցիկ իշխան Գուդալ էր։ Գերմանիայից եկած մի գոկտոր, լսելով առաջին անգամ այս օպերան, շատ հաւանել եւ ասել է. «Սա մի վիթխարի օպերա է, բայց պէտք է եւ կատարումն էլ վիթխարի լինի»։ Ի հարկէ։

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Հոկտեմբերի 6-ին

Անցեալ օրը դուժայի նիստում քննվում էր տեղիս վաճառականների եւ նրանց գործա-

կատարների տուած խնդիրքը՝ կիրակի օրերը խանութները փակ պահելու կարգադրութիւն անելու համար։ Ըստ երեւոյթին, առողջ դատողութիւնը կասէր՝ պէտք է բաւարարութիւն տալ այդ աւելի քան ցանկալի խնդրին, քանի որ այդ բանը խնդրում են ոչ միայն գործակատարները՝ բարոյապէս եւ հոգեպէս վատակողները միայն, այլ եւ վաճառականները՝ նիւթապէս առերես տուժողները։

Բայց եկէք տեսէք, որ Բագուում այդպէս չեղաւ։ Ցայտնի չէր արդեօք քաղաքի ընտրեալներին, որ այդ դասակարգը օրվայ մէջ minimum 18 ժամ է ոտքի վրա կանգնած տանջվում։ Կամ գուցէ յայտնի էր, բայց բնական էր համարում։ Նա մերժեց այդ խնդիրը եւ իր այդ ամօթաբեր վճռով կարծես ասելիս լինէր. մենք ընտրված չենք, որ այդպիսի ինչին, մանր մարդկանց գործերով զբաղվենք. արժէն այդ գեռունները, որ նրանց համար բերան բաց անենք... նրանք ինչ են, որ հանգստութեան մասին էլ մտածում են...

Աւելի խայտառակ են պատճառաբանութիւնները. կիրակի օրերը Բալախանիի աշխատաւոր դասակարգը Բագու է գալիս առեւտուր անելու մի քանի ժամով եւ յանկարծ նրան այդ յարմարութիւնից զրկելը լաւ չէ... Տեսէք. դուստրի ձայնաւորները ուրիշ ոչ ոք են, եթէ ոչ նաւթարդիւնաբերող, չոգենաւատէր, գործարանատէր կապիտալիստներ, տրոբզած կառավարիչներ եւ այլն, որոնք իրանց աշխատաւոր դասակարգին հանգիստ չեն տալիս ոչ միայն կիրակի օրերը (որ գան Բագու առեւտուր անելու), այլ նոյն իսկ Քրիստոսի չարչարման, խաչման կամ Ցարութեան օրերին... Ի՞նչ պլատոնական սրտացաւութիւն... իսկ այդպիսի դասակարգի համար մի եւ նոյն է թէ նա կիրակի, թէ լի օր կը գնայ Բագու, քանի որ, երբ էլ գնայ, նրա օրը պակաս են գրելու...

Ի՞նչպէս էք հաւանում, ընթերցող, այսպիսի աչքակապութիւնը, որի անունը ձեզ ենք թողնում տալ։ Իսկ այս պատճառաբանութիւնը. չոգենաւատէրերը առանց այդ էլ օգուտ չեն անում. նրանց գործերը այնքան շտապ են, որ ամեն մի ժամը թանգ է, հեռեւապէս ինչպէս կարելի է գործակատարին ազատութիւն եւ հանգստութիւն տալ։ Խեղճ մարդիկ, չոգենաւերը օգուտ չեն տալիս ձեզ,—ապա ինչու էք այդպէս պինդ բռնել նրանց պոչից եւ եթէ օգուտ չէք անում, ինչով են մեղաւոր գործակատարները։ Կամ մի՞թէ ֆօնտաններից եւ նաւթահորերից ստացած չաղ դիվիդենդը հաւասար բաժին էք անում ձեր ծառայողների հետ... Ինչպէս պատուած վէքսելը չի սաղանայ, այնպէս էլ ձեր պատճառաբանութիւնները ձեզ չեն պաշտպանի։

Ռ. Յովհաննէսեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, հոկտեմբերի 7-ին

«Մշակի» 189 համարում կարդացի «Հին թատերասէր» ստորագրութեամբ մի գրութիւն՝ հոկտեմբերի 5-ին տուած իմ ներկայացման մասին։ Ես չեմ կամենում երկարօրէն բանակռիվ մէջ մտնել այդ անյայտ պարոնի հետ, որովհետեւ դրա գրուածքը ոտից գլուխ զուրկ է ճշմարտութիւնից...

Ի միջի այլոց յիշենք, որ «Հին թատերասէրը» ինձ իբրեւ «դերասան» չէ ճանաչում. նա ուր էր, երբ ես Թիֆլիսի խմբումն էի. սրան կարող են վկայել մեր այժմեան բոլոր դերասանները։ Ահա ամբողջ 14—15 տարի է, ինչ գործում ենք ըստ մեր ոյժի՝ միշտ բարձր պահելով հայոց բեմը, եւ ոչ մի տեղ գտնէ, ոչ մի տրտունջ կամ անբաւականութիւն չէ պատահել. թող այս բանիս վկայեն մեր հայ թերթերի գաւառական հին թղթակիցները։

Երկրորդ՝ թող յայտնի լինի պարոնին, որ ես մինչեւ ներկայացումն եղել եմ սարսափելի տկար, ոտքերս ուռած եւ ես չեմ կարողացել ոչ մի փորձի ներկայ գտնվել, իսկ ներկայացումն սկսելուց առաջ ես կուլիսների ետեւում պառկած էի եւ այդ դրութեան մէջ ինձ տեսել են թէ մասնակցող սիրողները եւ թէ հանդիսականներից մի քանիսը։ Դեռ չնորհակալութիւն եմ յայտնում մասնակցողներին, որոնք ամեն ինչ համարեա պատրաստել էին... Ուրեմն, ընթերցող՝ ձեր դատաստանին եմ թողնում դատել լրատուին։

Ի վերջոյ չնորհակալութիւնս եմ յայտնում իմ ներկայացման մասնակցող յարգելի սիրողներին, որոնք բացի մասնակցելուց, ամեն կերպ խնամք են տանում ինձ վրա տկարութեանս միջոցում։

Դերասան՝ Յովսէփ Կարինեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կովկասի կառավարչապետ գեներալ-ադիւտանտ իշխան Գ. Ս. Գոլիցին հոկտեմբերի 12-ին Կարսից վերադարձաւ Թիֆլիս։

—

Երեւանից «Тифл. Листовъ» լրագրին հեռագրում են հոկտեմբերի 12-ից. «Երէկ առաւօտեան նորին մեծութիւն պարսից Շահը, իր ավիտայի ուղեկցութեամբ, այցելեց զլխաւոր մզկիթը, ուր դիմաւորեցին նրան հոգեւոր մէջլիսի ներկայացուցիչը եւ մահմեդական բազմաթիւ հոգեւորականութիւնը։ Մէջլիսի նախագահն արտասանեց ողջոյնի ճառ, եւ ապա կարդաց Խուտբա աղօթքը. դրանից յետոյ ռուս-թուրքական դպրոցի ուսուցիչները եւ աշակերտները բաղդ ունեցան ներկայանալու նորին մեծութեանը, եւ Շահը չնորհեց դպրոցի կարիքների համար 300 ռուբլի։ Ցերեկվայ 1 ժամին տեղի ունեցաւ նախաճաշ նահանգապետի տանը, որից յետոյ նորին մեծութիւնը, ուղեկցութեամբ Երեւանի նահանգապետ կոմս Տիզենհաուզէնի եւ ավիտայի, կառքով ճանապարհ ընկաւ դէպի Էջմիածին, ուր ժամանեց մօտ 3 ժամին։ Հնագոյն սրբավայրի դռների մօտ նորին մեծութեանը դիմաւորեցին սինոդի անդամները, եպիսկոպոսները եւ մնացած միաբանութիւնը։ Կառքից իջնելով, նորին մեծութիւն Շահը ուղղեց իր քայլերը դէպի Էջմիածնի տաճարը, որի դռան առաջ նրան դիմաւորեց ամենայն հայոց Կաթողիկոսը։ Կաթողիկոսի ողջոյնի ճառից յետոյ, նորին մեծութիւն Շահը, նորին վեհափառութեան ուղեկցութեամբ, մտաւ տաճարը եւ տեսաւ եկեղեցական հնութիւնները։ Այդ նորին մեծութիւն Շահը գնաց վեհարան եւ բարեհաճեց թէյ խմել Կաթողիկոսի մօտ։ Այդտեղ նորին մեծութիւն Շահը չնորհեց Կաթողիկոսին Առիւծի եւ Արեգակի ադամանդաշարդ չքանշանը։ Վանքը գեղեցիկ կերպով զարդարված էր դրօշակներով եւ կանաչով, եւ կառուցված էին չորս յաղթական կամարներ»։

—

Մեռած մարդկանց մարմինները երկաթուղիներով տեղափոխելու մասին նորերս տեղի ունեցաւ ներքին գործերի մինիստրութեան բժշկական խորհրդի մէջ յատուկ խորհրդակցութիւն։ Խորհուրդը այն կարծիքը յայտնեց, որ ցանկալի չէ զարգացնել դիակների տեղափոխութիւնը։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ շուտով Պետերբուրգում հիմնվում է մի ընկերութիւն, որի նպատակն է լուսաւորութիւն տարածել Ռուսաստանի ծայրերում։ Այդ ընկերութեան անդամներ կարող են լինել ամեն դասակարգի անձինք, որոնք համակրում են այլազգիների լուսաւորութեանը։ Ընկերութեան կանոնադրութեան նախագիծը արդէն մշակված է եւ այս օրերս կառաջարկվի հաստատութեան։

—

Հոկտեմբերի 8-ին Պետերբուրգում կայացաւ կայսերական ռուսաց թատրոնական ընկերութեան ընդհանուր ժողովը։ Ժողովին նախագահող Ա. Գ. Մոլչանով, պարապմունքներն սկսելուց առաջ, զեկուցեց ժողովին Թագաւոր Կայսրի ընկերութեանը արած Բարձրագոյն նոր չնորհի մասին, նշանակելով Մեծ Իշխան Սերգի Միխայլովիչին ընկերութեան Օգոստափառ նախագահ։ Ժողովի քննած նշանաւոր հարցերից մէկն էր՝ թատրոնական գործիչների երկրորդ համառուսական ժողով գումարելու մասին։ Որոշվեց այդ համագումար ժողովը կազմել Մոսկվայում տեղի ունեցած նախկին համագումար ժողովի ծրագրով։

—

Աշակերտների ամարային զբօսանքները կանոնաւորելու նպատակով Պետերբուրգի ուսումնական շրջանը ժողովում է մանրամասն տեղեկութիւններ այն աշակերտական զբօսանքների մասին, որոնք կատարված են այդ շրջանում վերջին ամառվայ ընթացքում։

—

Մոտ օրերս Պետերբուրգում հիմնվել է մի ընկերութիւն, որ կրում է «Սամարացիների ընկերութիւն» անունը։ Ընկերութեան նպատակն է առաջին օգնութիւնը հասցնել դժբաղդ դէպքերում եւ յանկարծական հիւանդութիւնների ժամանակ, նոյնպէս եւ տեղեկութիւններ տարածել առողջապահութեան եւ հիւանդապահութեան մասին։ Ընկերութիւնը բացել է մի պահեստ, որից ամենաէժան գներով ցանկացողները կարող են գնել այնպիսի առարկաներ, որոնց ձեռք բերելը ուրիշ տեղերում շատ դժուար է չքաւորների համար։

—

Մինչեւ նոյեմբերի 15-ը, ինչպէս յայտնի է, պէտք է ստացվին Պետերբուրգի ուսումնական շրջանի հոգաբարձուի արած հարցապնդումի պատասխանները թանչանների սիստեմի վերաբերմամբ միջնակարգ դպրոցներում։ Արդէն պատասխաններն ուղարկած անձանց մեծ մասը այն կարծիքն են յայտնում, թէ պէտք է թողնել թանչաններ դնելու նախկին սիստեմը։

—

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 10-ին Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցին իր հետեւորդներով ժամը 2-ին ժամանեց Կարս։ Կայսրանի դռանը քաղաքի կողմից աղ ու հաց մատուցին, որն իշխանը հաճութեամբ ընդունեց ու ասաց. «Շնորհակալ եմ ձեզանից. այո, երեք տարի է ձեզ չեմ տեսել. ժամ կը գամ քաղաքը տեսնելու, թէ ինչ փոփոխութիւններ են կատարվել»։ Այնուհետեւ ժամացոյց խնդիրներն ստանալով եւ ամենքին էլ խոստանալով, որ այդ մասին կը խորհի, մտաւ նորից իր սալոնվագոնը մի քանի գեներալների հետ խորհրդակցելու։ Կայսրանից ուղեւորվեց դէպի զինուորական ժողովարանը, ուր նրա համար իջեւան էր պատրաստված։ Ճաշից յետոյ իշխանը դուրս եկաւ քաղաքը շրջելու։ Հոկտեմբերի 10-ին կէսօրվայ գնացքով իշխան կառավարչապետը մեկնեց դէպի Թիֆլիս։ Դիմաւորելու եւ ճանապարհ դնելու համար հաւաքվել էին զինուորական եւ քաղաքական բոլոր վարչութիւնների ներկայացուցիչները ու քաղաքային հասարակութիւնը»։

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Ցայտնի կալուածատէր Մանուկ Բայբուրդեան, աչքի առաջ ունենալով մեր գիւղացիների այս տարվայ անել վիճակը, Դիլիսկա գիւղացիներից 2000 ռուբլի կապալադրամի տեղ վերցրել է միայն 900 ռուբլի, մնացած 1100 ռուբլին զիջելով գիւղին։ Պ. Բայբուրդեանի այս գովելի վարմունքը ցանկալի է, որ օրինակ ծառայէ մեր այն կարգի կալուածատէրերի համար, որոնք պուդ ու կէս իւղի համար դանդատվում են ամբողջ գիւղերի դէմ»։

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Այսօր, հոկտեմբերի 11-ին, առաւօտեան 6—7 ժամին մի խումբ վանեցի հայ պանդուխտ մշակներ մակոյքով գնում են ծովի մէջ խարիսխ գցած անգլիական «Բաթում» չոգենաւը օրավարձով աշխատելու։ Աշխատանքը վերջացնելով, կրկին մակոյկ են նստում, որ վերադառնան. բայց մակոյկը դեռ տեղից չը շարժված, չոգենաւը պտոյտ է գործում, որի ժամանակ ղեկը ուժգին խփում է մակոյկին եւ ջարդում։ Մակոյկի մէջ եղած բոլոր մարդիկ թափվում են ծովը. խեղդվում են չորս հոգի. երեքը անյուսալի դրութեան մէջ գտնվում են հիւանդանոցում, իսկ մնացածները ազատվում են։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Գաւառի շատ գիւղերում եւ մասամբ քաղաքում տարածված են տիֆ եւ դեղինտերիա հիւանդութիւնները, որոնք մի քանի գիւղերում մեծ թւով զոհեր են տանում։ —Բեժանց գիւղումն էլ տաւարի ժանտախտ է երեւացել։ Հիւանդութեանը վերջ տալու համար՝ անասնաբոյժը մօտ 150 գլուխ տաւար է սպանել տուել»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Այս օրերս Շուշու գաւառի Սարուշէն գիւղում վերաբացվեց այն միդասեան դպրոցը, որ հիմնել եւ պահում է բաքուաբնակ պ. Գրիգոր Այվազեան։ Այդ դպրոցը 1897 թւին փակվեց իբրեւ հայոց եկեղեցական-ծխական դպրոց եւ այժմ վերաբացվեց իբրեւ կառավարչական դպրոց։ Պ. Այվազեան դպրոցի պահպանութեան համար տալիս է տարեկան 500 ռուբլի։ Վերաբացման հանդէսին ներկայ էր պետական դպրոցների տեսուչ Իսակիմով, որ մի ճառի մէջ ասաց, թէ Սարուշէնի դպրոցը այժմ անցնում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան։ Դպրոցը երկու սեռի երեխաների համար է. ուսուցիչները պիտի վճարեն այն վարձը, որ կը նշանակէ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, իսկ չքաւորները ձրի պիտի ընդունվեն»։

—

ԲԱԼԱԽԱՆԻՑ մեզ գրում են. «Վաղուց է, որ զգացվում է այստեղ մի ընթերցարանի կարիք. այժմ ուրախութեամբ տեղեկանում ենք, որ պ. Նիկողայոս Տէր-Մանուէլեանցը խնդիր է ներկայացրել Բագուի պ. նահանգապետին՝ թոյլտուութիւն ստանալու համար։ Զենք կարող ամբողջ սրտով աջողութիւն չը ցանկալ այդ գործին, քանի որ այստեղ ազատ ժամանակը վատնվում է այնպիսի զբաղմունքների մէջ, որոնք փչացնում են մարդու թէ ֆիզիքական եւ թէ բարոյական կեանքը։»

—

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ մեզ գրում են. «Մօտ օրերս այստեղ մի դժբաղդութիւն պատահեց։ Քաղաքի տներում ծառայող երեք գիւղացի պատանիներ գնում են «աւազնոցը», որ աման լուանալու համար՝ աւազ բերեն։ Իջնում են փոսը եւ անզգուշութեամբ սկսում են աւազ փորել, բայց կամարաձեւ պատը փլվում եւ իր տակն է թողնում երեքին էլ։ Բարեբաղդաբար, այդ միջոցին ոչ հեռու կանգնած են լինում մի քանի զինուորներ, որոնք նկատում են այդ եւ՝ օգնութեան հասնելով՝ փորում են հողը եւ շուտով երկուսին հանում հողի տակից. մէկի միայն ոտն է մի փոքր վնասված լինում, իսկ միւսը՝ ուշագնաց եղած։ Երրորդին չէ աջողվում շուտով գտնել, զինուորները սխալ են փորում. ուշքի եկած ընկերի ցուցմունքով միայն նորից փորում են եւ երրորդ պատանու մեռած դիակը հանում։ Այդ դժբաղդը Ղըզլ-Քիլիսայ գիւղացի աղքատ ծնողների զաւակ էր, Թաթոս անունով։ Թշուառ ծնողները եկան տարան իրանց որդու դիակը։ Ափսոս, որ հանգուցեալ ծառայի տէրը ոչնչով չէ կարող գոնէ նիւթապէս մասամբ վարձատրել նրանց»։

—

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՕԼԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի 5-ին, գոհացողական մաղթանքներից յետոյ, Ալէքսանդրոպօլ-Երեւանեան գծի վրա գցվեց ու ամրացվեց առաջին ռէլսը՝ ճանապարհի գլխաւոր կառավարիչ Վուրցէլի ձեռքով։ Շինութեան գործը առաջ է գնում շատ արագ։ Դեռ սրանից մի երկու ամիս առաջ մենք առիթ ունեցանք տեսնել այն ժայռերի եւ ձորերի հարթումը, որոնց միջից պէտք է անցնէ քաղաքակրթութեան ապագայ առաջնորդը...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

—

Անգլիան միշտ աշխատել է խոյս տալ դաշնակցական կապեր հաստատելուց եւրօպական ցամաքային պետութիւնների հետ, չը կամենալով իր անկախ քաղաքականութիւնը ենթարկել նրանցից որ եւ է մէկի ազդեցութեան։ Անգլիական կառավարութիւնը, լինէր նա տօրիների թէ ազատամիտների ձեռքին, միշտ գերադաս է համարել գործել միայնակ, ազատ, առանց դիմելու այս կամ այն պետութեան օգնութեան՝ լաւ իմանալով, որ դաշնակցութիւնները, երկայրի սրի նման, եթէ մի դէպքում կարող են օգտակար լինել, մի այլ դէպքում կարող են լինել եւ նոյնչափ վնասակար։ «Ազատ ձեռքեր»—այս է եղել անգլիական արտաքին քաղաքականութեան նշանաբանը։

Եւ յիրաւի, բացի ճգնաժամի սակաւաթիւ դէպքերից, երբ քաղաքական կեանքի աննըպաստ հանգամանքները հարկադրել են Անգլիային թողնել առժամանակ աւանդական անկախ քաղաքականութիւնը եւ միանալ որ եւ է դաշնակցութեան, բացի Նապոլէօն I-ի եւ Խրիմի պատերազմի օրերից, այս դարի ընթացքում չէ կարելի ցոյց տալ մի այլ լուրջ դէպք, երբ Անգլիան հակումն ցոյց տար դաշնակցութիւններ կամ նոյն իսկ մասնական համաձայնութիւններ կապելու եւրօպական պետութիւնների հետ։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ երեքպետեան եւ երկպետեան դաշնակցութիւնները բաժանեցին իրանց մէջ համաշխարհային հեգեմօնիան, երբ կարծես մեծ պետութիւններից ոչ մէկը, առանց յարելու այդ դաշնակցութիւններից առաջինին կամ երկրորդին, չը պիտի հնարաւորութիւն ունենար նշանաւոր դեր կատարելու համաշխարհային քաղաքականութեան ասպարէզում, նոյն իսկ այդպիսի ժամանակ Անգլիան չը միացաւ որ եւ է դաշնակցութեան եւ նախամեծար համարեց մնալ միայնակ։ Երկար տարիների ենթացքում Գերմանիայի, երեքպետեան դաշնակցութեան այդ ղեկավարի ջանքերը՝ հրապուրելու Անգլիային եւ կապելու նրան երեքպետեան դաշնակցութեան հետ՝ մնում էին բոլորովին ապարդիւն։ Յենված իր հսկայական նաւատորմի վրա՝ Անգլիան կարողանում էր առանց ուրիշների օգնութեան էլ երկար ժամանակ առաջնակարգ դեր խաղալ պետութիւնների կռուցերտի մէջ։

Սակայն վերջին տարիների ընթացքում համաշխարհային քաղաքական կեանքի հանգամանքները դասաւորվեցին ոչ ի նպաստ Անգլիայի։ Սկսվեցին զուտ ցամաքային պատերազմներ—մի կողմից հարաւ-աֆրիկականը եւ միւս կողմից չինականը,—որոնք պարզապէս ապացուցեցին, որ աջողութեամբ ինքնուրոյն քաղաքականութեան հետեւելու համար, Անգլիայի զինուորական այժմեան ոյժերը բաւարար չեն։ Ուղարկելով իր համարեա ամբողջ

քամաքային զօրքը հարաւային Աֆրիկա՝ Անգլիան չը կարողացաւ մի եւ նոյն ժամանակ բաւականաչափ զօրք ուղարկել նաեւ Չինաստանի պատերազմական դաշտը եւ պաշտպանել անգլիական առեւտրի առաջնակարգ շահերը, որոնք կենտրոնացած են այնտեղ, մանաւանդ Եանցէյի հովտում։ Չինական բարդութիւնների սկզբից ակած մինչեւ այժմ, ակնայտնի կերպով նկատւում է, որ Անգլիան չէ խաղում Չինաստանում այն դերը, որ համապատասխան լինէր մի կողմից նրա ունեցած շահերի չափին եւ միւս կողմից նրա դիրքին պետութիւնների մէջ։ Կարելի էր երկիւղ կրել, որ չինական գործերը վերջ ի վերջոյ կը կարգադրվեն՝ առանց ի նկատի առնելու անգլիական շահերը։ Արեւելեան Ասիայում այսպիսի մի դէպք ոչ միայն կորստաբեր հետեւանքներ կարող էր ունենալ անգլիական առեւտրի համար, այլ եւ մեծ ազդեցութիւն կը գործէր Հնդկաստանի վրա, որի բնիկները տեսնելով Անգլիայի թուլութիւնը եւ նրա խաղացած երկրորդական—երրորդական դերը հարեւան Չինաստանում, կարող էին քաջալերվել իրանց ապստամբական շարժումների մէջ ընդդէմ անգլիական տիրապետութեան։ Այլ եւս չենք յիշում այն, որ անգլիական քաղաքականութեան պարտութիւնը Չինաստանում պատճառ կը դառնար Անգլիայի պրէստիժի անկման եւ աշխարհի միւս մասերում։ Այս կրիտիքական դրութիւնից կարող էր ազատել Անգլիային մեծ պետութիւններից որ եւ է մէկի օգնութիւնը միայն, մի դաշնակցութիւն կամ առնուազն ժամանակաւոր համաձայնութիւն մի այսպիսի պետութեան հետ, որ նոյնպէս առանձնացած դիրքի պատճառով կարօտ լինէր ուրիշի օգնութեան։

Այսպիսի պետութիւն էր Գերմանիան։ Նրա դաշնակից Աւստրիան եւ Իտալիան չինական գործերում չեն կարող որ եւ է զգալի օգնութիւն ցոյց տալ Գերմանիային։ Այդ երկու պետութիւնների զօրքերի թիւը Չինաստանում հազիւ հասնում է 1,500-ի. նրանք չունեն այնտեղ խոշոր առեւտրական շահեր, չունեն նաեւ ցանկութիւն ահագին ծախքերի տակ մտնելու եւ նոր զօրքեր ուղարկելու Չինաստան միայն յօգուտ Գերմանիայի։ Ռուսաստանի, Ֆրանսիայի, Եապոնիայի եւ Միացեալ-Նահանգների ոյժերի եւ նրանց ազդեցութեան դէմ մաքառելու համար չինական հարցը կարգաւորելու գործում՝ Գերմանիան եւս, Անգլիայի նման, կարօտ էր մի դաշնակցի։ Բնական էր, որ այդ երկու պետութիւնները միանային միմեանց հետ թոյլ չը տալու համար միւս պետութիւններին, որ չինական գործերը կարգադրվեն ի վնաս անգլո-գերմանական շահերի։

Հեռագիրը մի քանի օր առաջ հաղորդեց արդէն, որ մի այդպիսի համաձայնութիւն կապվել է արդէն Անգլիայի եւ Գերմանիայի մէջ։ Անգլո-գերմանական համաձայնութեան գլխաւոր նպատակն է թոյլ չը տալ միւս պետութիւններին երկիրներ կորզել Չինաստանից մի այնպիսի ժամանակ, երբ իրանք, համաձայնութիւն կապող պետութիւնները, հնարաւորութիւն չունեն հաւասարաչափ եւ հաւասար արժէքի կտորներ ձեռք բերել։

Թէ անգլիական եւ թէ գերմանական մամուլը ամէն ջանք է գործ դնում հաւատացնելու, որ անգլո-գերմանական համաձայնութիւնը ուղղված չէ ոչ մի պետութեան դէմ, որ նրա միակ նպատակն է նպաստել չինական գործերի արագ եւ աջող լուծմանը։ Բայց եթէ այդ այդպէս է եւ համաձայնութիւնը ուղղված չէ ոչ մի պետութեան դէմ, ինչ կարիք կար առանձին դաշնագրով վաւերացնելու մի սկզբունք—չինական երկիրների անձեռնմխելիութիւնը,—որ առանց դրան էլ ընդունված էր միւս պետութիւնների կողմից։ Ցայտնի է, որ Ռուսաստանը երկու անգամ պաշտօնապէս յայտարարեց, որ Մանջուրիայի գրաւումը ժամանակաւոր բնաւորութիւն ունի եւ ռուսները կը մնան այնտեղ մինչեւ այն ժամանակ միայն, երբ վերջնականապէս կը կարգադրվեն չինական գործերը։

Մեզ թւում է, որ անգլո-գերմանական համաձայնութիւնը անմիջապէս ուղղված է Ռուսաստանի եւ մասամբ Ֆրանսիայի դէմ, որ շատ հեշտութեամբ չինական երկիրներից մի մեծ կտոր եւս կարող է միացնել իր հնդկա-չինական գաղթականութիւններին։ Որպէս մի համաձայնութիւն, որ կապում է Անգլիային երեքպետեան դաշնակցութեան առաջնակարգ անդամի՝ Գերմանիայի հետ, ընդդէմ երկպետեան դաշնակցութեան, անգլո-գերմանական համաձայնութիւնը ահագին քաղաքական նշանակութիւն կունենայ թէ չինական գործերում, եւ թէ մանաւանդ ապագայում, որպէս առաջին քայլ Անգլիայի միացման երեքպետեան դաշնակցութեան հետ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թիւրքական կառավարութիւնը տեղեկութիւն տուեց ռուսաց դեսպանին, թէ Էրզրումի ռուսաց հիւպատոսի վրա յարձակումն գործող քիւրդ յանցաւորները արդէն բռնված են եւ խիստ պատժի կենթարկվին։ Զինովիեվ բաւարարութիւն ստացած է համարում իրան թիւրք կառավարութեան վճռով, բայց եւ այնպէս նա յայտնեց, որ եթէ յարձակումների այդ տեսակ դէպքեր այսուհետեւ եւս կրկնվեն, նա չի բաւականանայ անմիջական յանցաւորների պատժով, այլ կը պահանջէ, որ բարձրաստիճան պաշտօնեաներն եւս պատժվեն։

—Ամերիկեան դեմօկրատների նախագահական թեկնածու Բրայան Tammany Hall-ում արտասանած ճառի մէջ, ի միջի այլոց, ասաց. «Մի ժողովրդի հետ առեւտուր անելու համար, կարիք չը կայ իշխել նրա վրա։ Կանադան զանազան իրեղէններ է գնում Միացեալ-Նահանգներում աւելի, քան Անգլիայում։ Նոյնպէս եւ օրինական իրաւունքներ հարկաւոր չէ ունենալ մի երկրի վրա, որպէս զի կարելի լինի պաշտպանել նրան յարձակումներից։ Վենեցուէլեան վէճի մէջ մենք ասացինք Անգլիային, թէ կամենում ենք իմանալ վէճի պատճառը։ Նա մեզ պատասխանեց, թէ դա ձեր գործը չէ։ Մենք պատասխանեցինք. «Եթէ այդպէս է, մենք ինքներս կը քննենք հարցը, եւ եթէ դուրս գայ, որ դուք ուզում էք խլել մի ոտնաչափ հող անգամ, որ ձեզ չէ պատկանում, այն ժամանակ դուք կը խլէք ոչ թէ Վենեցուելայից, այլ նոյնպիսի մեծ երկրից, որպիսին ձերն է»։ Անգլիան ձայնը կտրեց, եւ վերջ ի վերջոյ մենք վէճը յանձնեցինք միջնորդ դատարանի քննութեան։ Նոյնպիսի եղանակով մենք կարող ենք պաշտպանել եւ Ֆիլիպպեան կղզիները։

—«Times» հաղորդում է, թէ Կապի գաղթականութեան այժմեան նահանգապետ Միլներ կը նշանակվի Տրանսվալեան եւ Օրանժեան գաղթականութիւնների նահանգապետ։

—Լրագիրները հաղորդում են մի քանի տեղեկութիւններ Մէկլենբուրգ-Շվէրինեան դուքս Հենրիխի մասին, որ մօտ օրերումս ամուսնացաւ հոլանդական թագուհի Վիլհելմինայի հետ։ Դուքսի հայրը Գերմանիայի միացման ամենառանդաւոր գործիչներից մէկն էր եւ հռչակ էր ստացել ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ։ Դուքսի մայրը Շվարցբուրգ-Ռուդոլֆշտատի իշխանական տանից է։ Դուքսի եղբայրները նշանաւոր դեր են խաղացել զինուորական եւ վարչական ասպարէզներում։ Դուքս Հենրիխ, որ ամենից կրտսերն է ընտանիքի մէջ, կը դառնայ մի նոր արքայական տան նախահայր, որովհետեւ նրա սերունդը ժառանգելու է հին Օրանեան տան գահը։

—Սամոսի ազգարնակութիւնը դժգոհ է եւ իր նոր իշխան Միխայլակի-էֆէնդիից։ Կղզու սենատորները եւ պատգամաւորները,—ինչպէս հաղորդում է Վիէննայի «Korr. Bureau»,—դիմեցին սուլթանին մի գանգատով իշխանի դէմ այն բանի համար, որ նա փակեց ազգային ժողովը եւ նշանակեց նոր ընտրութիւններ։ Նրանք խնդրում են սուլթանին նոր ընտրութիւնների առաջն առնել, որովհետեւ նրանք կարող են կարգը խախտել կղզու վրա եւ վնասել նրա ֆինանսներին։

—«Իգտամ» լրագիրը հաղորդում է, որ Բ. Դուռը յայտագրեր ուղարկեց բոլոր օտար պետութիւնների մինիստրութիւններին, որոնցով առաջարկում է նրանց Թիւրքիա եկող օտարահպատակների անցագիրների վրա նկատողութիւնները գրել ֆրանսերէն լեզուով, որովհետեւ նա ամենատարածված լեզուն է Թիւրքիայում։ Լրագիրը կարծում է, որ այդպիսի առաջարկութիւնից չը պէտք է վիրաւորվի ոչ մի օտար պետութիւն, որովհետեւ օտարահպատակների անցագիրները ստուգելու համար թիւրքաց կառավարութիւնը ստիպված է լինում բազմաթիւ լեղուագէտ պաշտօնեաներ պահել կըրկնակի ռոճիկներով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Անցեալ օր, երեկոյեան, անցնում էի Ներսիսեան դպրոցի մօտով։ Դպրոցի շէմքում նըկատեցի մարդկանց մեծ երթեւեկութիւն, հատուկտոր շտապ խօսակցութիւններ, շահագրգռված դէմքեր։ Ցիշեցի, որ այդ երեկոյ նըշանակված էր դպրոցի նոր հոգաբարձութեան ընտրութիւնը։

Ցանկարծ առաջիս ցցվեց իմ ծանօթ պատգամաւոր—հոգաբարձուներից մէկը, որ շտապով դէպի դպրոցն էր գնում։

—Մի՞թէ ուշացել էք, հարցրի ես։

—Երեւի ոչ. բայց շատ են վաղ նշանակել նիստը։ Ով է լսել, որ ժամի 7-ին ժողով սկսվի։ Իսկ այժմ 7-ից արդէն մի քառորդ անց է։

—Անկասկած, մի կէս ժամ ուշ կը սկսվի, նկատեցի ես. իսկ մինչեւ քուէարկութիւնը ժամանակ շատ կայ։ Ասա, տեսնենք, ինչպէս են հակառակ կողմերի պատրաստութիւնները։

Հոգաբարձուն դէմքի վրա ցոլացրեց հանդիսաւոր մի հայեացք եւ հատ-հատ արտասանեց։

—Մեր գործը շատ լաւ է։ Պատգամաւորների ընդհանուր թուի 63%-ը մշակականներ են, իսկ 37%-ը հակառակորդներ։ Բայց...

—Ի՞նչ բայց։

Հոգաբարձուն դէմքը խոժոռեց, աչքերը փայլեցին, շրթունքները կրծոտեց եւ յուզված ձայնով փսփսաց ականջիս.

—Կօնդակներով մեզ կը սպանեն, գիտէ՞ս։ Ինչ որ չեն կարողանում աջողեցնել հոգաբարձական ժողովներում, կաշխատեն աջողեցնել էջմիածնից եկած հրամաններով։ Քանի քանի այդ տեսակ դէպքեր են եղել։ Մաքառել ենք եւ պէտք է մաքառենք. բայց յաճախ եւ զիջել ենք։ Այնտեղից հրամայում են, թէ սրան որդեգիր ընդունեցէք, այս մէկին թոշակ տուէք, այս ինչ ուսուցչին կենսաթոշակ նշանակեցէք եւ այլն եւ այլն։

—Շատ լաւ, դիցուք հրամայում են. բայց դուք էլ անկասկած կարգ ու կանոն ունէք, որոնցով ղեկավարվում էք, վրա բերելի ես։

—Ուզում էք ես մի գուշակութիւն անեմ, ասաց հոգաբարձուն գլուխը թափ տալով։ Նորերս մենք մերժեցինք մի քահանայ ուսուցչին կենսաթոշակ նշանակելու։ Գռազ կը դամ, որ վաղը կօնդակ կը ստանանք նրան կենսաթոշակ տալու։

—Է՛հ։ Դուք չափազանցնում էք։ Այդ անկարելի է։ Շատ շատ միայն կը յանձնարարեն այդ անելու։

Հոգաբարձուն աւելորդ համարեց լինձ համոզել, ձեռքով արաւ եւ բաժանվեց։

Ես առաջ գնացի։ Պատահեցի Մոզնու եկեղեցու ծխականներից մէկին, որ նոյնպէս դէպի Ներսիսեան դպրոցն էր գնում։

—Այդ ո՞ւր ես գնում, հարցրի ես, դու հօ պատգամաւոր չես։

—Գնում եմ տեսնեմ, թէ նշանակվի պատգամաւորները կը պահեն արդեօք ժողովրդի պատիւը։ Ինչու, ինչու պէտք է մենք վիրաւորանքի ենթարկվենք։ Ինչու չը պէտք է մի անգամ եւս մեզ հրաւիրէին ընտրութեան, մանաւանդ որ ազատ կիրակի կար մէջտեղը։ Երեւի այնտեղ բողոքող կը լինի։

—Ոչ, ոչ եւ ոչ. ոչ ոք ոչինչ չի ասի. այդքան միամիտ չը պէտք է լինել։ Գնանք կլուբ, այնտեղ կը գան յայտնելու ընտրութեան մասրամասնութիւնները։

Ուղեկիցս համաձայնվեց։ Մենք գնացինք։

Վրթին

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

12 հոկտեմբերի

ՇԱՆԳՀԱԷ։ Ճիշդ տեղեկութիւններ ունեցող ոչ-զինուորական շրջաններում կարծում են, որ չինացիները ձեռը փորձ կը փորձեն յետ առնելու Պեկինը։

ԿԱՆՏՕՆ։ Խռովարարները պաշարեցին Գուզժօու։ Կայսերական զօրքերին ծանր կորուստներ պատճառելուց յետոյ՝ նրանք գրաւեցին Սանչժուօ, որ մի մեծ վաճառական քաղաք է։ Այսօր ապստամբութիւն բռնկեց Կամխունում, Գուանդունի սահմանի վրա։

ՇԱՆԳՀԱԷ։ Ծովապետ Սէյմուր հասաւ այստեղ։ Իշխան Ուխտոմսկի այսօր ճանապարհ է ընկնում դէպի Պորտ-Արտուր։ Ճանապարհը դէպի Պեկին շատ վատ դրութեան մէջ է. նամակները ուշանում են վեց շաբաթով։ Բոլոր փորձերը վերականգնելու առեւտրական գործունէութիւնը Տեանձինում հանդիպում են անաջողութեան, որովհետեւ հաղորդակցութիւնը Տակուի հետ շատ դժուար է։

ԻՕԿՕՀԱՄԱ։ Ինչպէս հաղորդում են Սէուլից, Սէուլ-Վիչժօու երկաթուղային գծի շինութիւնը սկսվել է։ Շինութեան պայմանագիրը կապել են ֆրանսիական ինժեներները։

ՇԱՆԳՀԱԷ։ Վալդերզէէ մի խառն զօրաբաժին ուղարկեց դէպի Մինների արքայական տան գերեզմանները։

ԲԵՐԼԻՆ։ Ցինտաուից ստացված պաշտօնական հաղորդագրութիւններին նայելով՝ հոկտեմբերի 10-ին Ցեաուչժօուի շրջանում տեղի ունեցաւ ընդհարումն գերմանական զօրքի եւ չինացի խռովարարների մէջ։ Երկու գիւղեր, որոնք զետեղված են Կօուրէի հարաւ-արեւմտակողմում եւ որոնք շրջապատված էին հողային ամրութիւններով եւ եռանդով պաշտպանվում էին, գրաւվեցին։ Գերմանական զօրաբաժինը կորուստներ չունեցաւ։ Չինացիների կողմից ընկան եւ վիրաւորվեցին բաւականաչափ մարդիկ։ Գերմանական զօրքերը վերադարձան Կօուրէից, տասներկու ժամվայ արշաւանքից յետոյ, շատ լաւ դրութեան մէջ։

ԼՕՆԴՕՆ։ Գանձարանի կանցլեր Հիկս-Բիչ Լիվերպուլի առեւտրական պալատի բանկէտում՝ չօշափելով վերջին անգլո-գերմանական համաձայնութեան խնդիրը՝ ասաց, թէ բրիտանական սկզբունքները Չինաստանի վերաբերմամբ ընդունված են Գերմանիայի կողմից. նա չէ ցանկանում տալ պայմանագրին այն նշանակութիւնը, որ նա չունի, բայց եւ այնպէս այն էլ մեծ նշանակութիւն ունի, որ մի այնպիսի դժուար հարցում, ինչպիսին է չինականը, երկու մեծ պետութիւններ կարողացան ճշդութեամբ որոշել իրանց շահերն եւ նպատակները եւ առաջարկել նրանց միւս պետութիւնների բարեհաճացողութեանը։ Եթէ ենթադրել, որ այդ պետութիւնները, մանաւանդ Ռուսաստանը, դէպի որը, նրա կարծիքով, ամբողջ աշխարհը կարող է լիակատար հաւատ ունենալ, կը միանան դաշնագրին, այն ժամանակ կատարեալ հիմք կայ յուսալու, որ անգլո-գերմանական համաձայնութեան մէջ բայատրված սկզբունքները կընդունվեն նոյնպէս այն բոլոր պետութիւններից, որոնք մասնակցում են նշանաւոր եւ մեծ հարցերի քննութեան. եւ եթէ այդ այդպէս է՝ այն ժամանակ հարցը կը կարգաւորվի բարեկամաբար։ Ապա կարելի է յուսալ, որ հարցի այդպիսի լուծմամբ Անգլիայի շահերը Չինաստանում կատարելապէս պահպանված կը լինեն եւ բոլոր պետութիւնների մէջ կը տիրեն խաղաղ յարաբերութիւններ։

13 հոկտեմբերի

ՎԱՇԻՆԳՏՕՆ։ Ամերիկական դեսպանը լիազօրութիւն է ստացել անյապաղ բանակցութիւններ սկսելու չինական գործակալների հետ այն կէտերի սահմանում, որոնք արժանացել են միւս պետութիւնների հաւանութեան։ Կառավարութիւնները կը սկսեն խորհրդակցել իրար հետ այնպիսի կէտերի վերաբերմամբ, որոնք տարաձայնութեան տեղիք են տուել, որպէս զի կարելի լինի լիակատար համաձայնութեան հասնել։ Լսվում է, որ միւս պետութիւնների ներկայացուցիչներն եւս Պեկինում ստացել են նոյնանման հրահանգներ։

ՏԵԱՆՁԻՆ։ Երէկ ճանապարհ ընկաւ մի խառն արշաւագունդ, որ կազմված էր ռուսներից, գերմանացիներից եւ ֆրանսիացիներից։ Գերմանացիները գնում են դէպի Խսիանգօ, իսկ ռուսներն ու ֆրանսիացիները՝ դէպի Պաօդի։ Արշաւագունդը կազմված է 1,000 մարդկանցից երկու թնդանօթով եւ հեծեալներով։ Արշաւանքը հարկաւոր էր Տեանձինի եւ Պեկինի հաղորդակցութեան գծի աջակողմեան թեւը պաշտպանելու համար, որովհետեւ «Մեծ-բռունցքի» ստուար խմբեր, որոնք փախել են չինական զօրքի չարքերից, ամրացել են Խսիանգօյի եւ Պաօտիի մէջտեղում, 40 մղոն Պեկինից հեռու։

ՏԵԱՆՁԻՆ։ Գեներալ Ինեաչան եկաւ այստեղ ամերիկական պահապանների ուղեկցութեամբ. այսաեղից նա գնում է Պեկին։ Ասում են, թէ նա գնում է Վալդերզէէի հրաւէրով։ Գերմանացիները պաշարեցին են ուղարկում դէպի Պուատինֆու, միտք ունենալով ձեռն այնտեղ անցկացնել։ Կայսերական զօրքերը գործում են Տեանձինի հարաւակողմում «Մեծ բռունցքի» դէմ, առանց արգելքների հանդիպելու դաշնակից զօրքերի կողմից։

ԿՕԼՍԲԵՐԳ։ Ֆիլիպսօլիս, որ ենթարկվել էր բօքսերների յարձակմանը եւ գրաւվել էր Նըբանցից մի քանի օրվայ պաշտպանութիւնից յետոյ, վերջին գիշերը նորից յետ առնվեց իսմանրիների եւ ուրիշ երկու զօրաբաժինների միջոցով։ Բօքսերները, որոնք շատ կորուստներ ունեցան, մեծ բազմութիւն էին կազմում այնտեղ։ Մի քանի բօքսերի կանայք Իեգերսֆօնտէնից, ինչպէս ասում են, գիշերը երկաթուղով տարվեցին Կոլսբերգ. նրանց տարան այնտեղից, իբր թէ. նրա համար, որ օգնութիւն էին ցոյց տալիս բօքսերներին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Ժամերը Պետերբուրգի հաշով)
տարբերութիւնը 58 րոպէ։

№ 5 գնացքը։ № 3 գնացքը։

Բաղուից դուրս է գալիս	ցեր.	4 ժ. 1 ր.	գիշ.	11 ժ. 29 ր.
Թիֆլիս է հասնում	առ.	8 » 53 »	եր.	5 » 34 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	9 » 32 »	եր.	6 » 34 »
Բաթում է հասնում	եր.	9 » 1 »	առ.	7 » 14 »

№ 6 գնացքը։ № 4 գնացքը.

Բաթումից դուրս է գալիս	առ.	7 ժ. 50 ր.	եր.	7 ժ. 59 ր.
Թիֆլիս է հասնում	եր.	7 » 15 »	առ.	8 » 42 »
Թիֆլիսից դուրս է գալիս	»	7 » 45 »	»	10 » 05 »
Բաղու է հասնում	ցեր.	12 » 10 «	»	5 » 16 »

արագ գնացք

Թիֆլիսից դուրս է գալիս	ցեր.	11 ժ.	19 ր.
Բաթում է հասնում	երեկ.	9 »	41 »
Բաթումից դուրս է գալիս. . . .	գիշ.	11 »	18 »
Թիֆլիս է հասնում	առաւ.	9 »	30 »

Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս. երեկ. 9 ժ. —
Ալէքսանդրօպոլ հասնում է . . . առ. 7 » 46 ր.
Կարս հասնում է . . . . . ցեր. 12 » 56 »
Կարսից դուրս է գալիս . . . . ցեր. 3 » 29 «
Ալէքսանդրօպոլից դուրս է գալիս . երեկ. 8 » 05 »
Թիֆլիս հասնում է . . . . . առ. 7 » 15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Կ. Մ. Ձիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ի. Ֆ. Պրօսասեվիչ—12—1 ժ. ականջի, քթի, կոկորդի եւ կրծքի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆՆԵՐԸ

Ի. Ֆ. Պրօսասեվիչ—5—6 ժ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վեներ. և մորթու հ.

Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Տ. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ

ՀՅՑԿԱԿԱՆ ԳԵՂԱՓՈՒԹԻՒՆ

ՄԱԿԱՐ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆԻ

Զարդարդ տիպ

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԷԿ

Դիմել Թիֆլիս՝ Կենտրոնական գրավաճառանոցին, Երեւան՝ յօրինողին։

Գուժարով գնողների համար զիջումն կը լինի։
1—3

ՆՕՏԱՐ

ԻԼԻԱ ԻՎԱՆՕՎԻՉ

ԾԻՆԱՄՁՎԱՐՕՎԻ

գրասենեակը բաց է ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան 9 ժամից մինչեւ 3-ը։ Վեւիամինովսկայա փողոց, № 2, վերին յարկ։
2—3

Շուտով լոյս կը տեսնի

ՄԱԿԱՐ ՀՄՇԿԵԱՆԻ

1901 թ. «ԾՈՑԻ», «ՊԱՏԻ», «ՍԵՂԱՆԻ» եւ „АРМЯНСКІЙ КАЛЕНДАРЬ“ ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ցանկացողները թող վաղօրօք յայտնեն, որպէս զի ժամանակին կարողանան ստանալ։
(Ե. Հ.) 7—15

ԲԺԻՇԿ

ՏԻԳՐԱՆ ԹԱԴԷՈՍԵԱՆ

Ընդունում է առաւօտեան 11—12 ժ. եւ երեկոյեան 5—6 ժ.

Մասնագիտութիւն՝ ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ։

Шелковниковская (Большая Кривая), д. Шаумова, № 18. 8—20

ԲԺԻՇԿ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ

վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի եւ ատամների հիւանդութիւնների բժշկութիւնը։ Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7½ ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վեւիամինեան փող. տ. Քարտաշեանի, № 4.
[Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ].
24—25

Въ непродолжительномъ времени поступятъ въ продажу новыя книги, соч. И. Я. Бронъфонъ-Бреннеръ

1] Курсъ коммерческой ариѳметики, 2-е изданіе.

2] Самоучитель двойной бухгалтеріи и

3] Руководство по составленію отчетовъ.

Въ виду большихъ требованій и ограниченнаго количества экземпляровъ, принимается заранѣе, до выхода, подписка у автора. Тифлисъ. Михайловская, 71.
20—20

ՑԱՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ

ՄԵԼԻՔ-ԻԻՍՈՒՓ

պատմական պօէմա

ԳԻՆՆ Է 20 կօպ.

Тифлисъ, Центральная Книжная Торговля. 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

1900 թ. լոյս տեսած գրքերը.

172 Առակք Լաֆոնթէնի, թ. Մ. Նուպարեանի . 1 —
173 Գռեհիկ, Օժէշկօի, թարգմ. Ա. Մ. . . . . —40
174 Խղճով դատաստան, թարգմ. Ստ. Մ. . . . — 5
175 Հայկական նշանագրեր հարթակարի համար, օր. Ե. Պատկանեանի . . . . . —80
176 Հոսհոսի ձեռատետրը, Յ. Պարոնեանի բ. տպ. 1 —
177 Սիֆիլիս, կակուղ շանկր և սուսուռակ, բժշկ. Վահան Արծրունու . . . . . —25
178 Մանկական լօտօ, հայերէն, ռուսերէն, վրացերէն և ֆրանսերէն լեզուով, բ. տպ. . . 1 —
179 Մակսիմկա, Ստանիւկեվիչի, թարգմ. Ա. Մ. . —15
180 Թշուառների բարեկամ, փոխ. բժշկ. Վ. Արծ. —20
181 Իւլեանկա, թարգմ. Պ. Հովուեանցի. . . . —10
182 Արդար ծերունի, Հիւգօյի, թարգմ. Ա. Մ. . —15
183 Եասի արկածքները, Օժէշկօի, թարգմ. Պ. Պ. —10
184 Պառաւ ծիտը, թարգմ. Տ. Սարգսեանի . . — 3
185 Իօնչ է խօսում սենեակը, թարգմ. Զ. Տ.—Գ. —10
186 Միլ'տօն, կաղմեց Հ. Առաքելեան . . . . —30
187 Մեծապատիւ մուրացկաններ, Յ. Պարոն. դ. տպ. —40

Վաճառվում են Ընկերութեան օգտին

Աղատութեան մասին, Միլլի, թարգմ. Ա. Կ. . . 1 20
Ֆրանս-Պրուսական պատերազմը . . . . . — 5
Ժողովածու Մօսկվայի հայ ուսանողների . . . 1 —
Կորիւն վարդապետ և նորին թարգմանութիւնք, գրեց Նորայր Հ. Բիւզանդացի 1 50
Ագուլեցոց բարբառը, Ս. Սարգսեանի . . . . 2 —
Մեղուներ, Լ. Լանդստրոտ, թարգմ. Զօկ . . . -15

Դիմել՝ Тифлисъ, контора Общества Изданія Армянскихъ книгъ (Лорисмеликовская № 11) կամ Tiflis (Russie) Société de la publication des livres Arméniens. 9—10

Լոյս տեսան եւ վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1901 թ.

ԾՈՑԻ ԵՒ ՊԱՏԻ

(Շիրակ)

ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Ծոցի օրացոյցը զարդարված է Ներսէս V կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Բաֆֆիի եւ Յ. Այվազովսկու պատկերներով, ունի բոլորովին նոր եւ հետաքրքիր յաւելուած՝ ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկարան, հարուստ երաշխան ու նոր զուարճալի վիճակարան։

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ եւ ընտիր մտքեր, հայոց եկեղեցական պատմութիւնից հատուածներ, զուարճալի պատմութիւններ, բոլորովին նոր ծիծաղաշարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ եւ ժողովրդական առածներ, ժողովրդական երգեր, գիւղական լէյլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, զուարճալի հանելուկներ, շուտասելուկներ, բժշկական, արհեստագիտական եւ այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ։ Տախտակը չքեղ եւ ճաշակով պատրաստված է յայտնի լիտոգրաֆիայում, 15 գոյնով։ Ցանկացողները ժամանակն բովանդակութիւնը տպագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի։

Գները՝ ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ. գուժարով գնողներին լինում է զիջում։

Դիմել՝ Александрополь. Карапету Апинянъ, կամ Alexaandrople Karapet Apinian (Caucase)։ Ցանկացողները թող չտապն, որ իր ժամանակին կարողանաք պատուէրները ճշդութեամբ կատարել։ (Ե) 3—12

Ատամների եւ բերանի խոռոչի հիւանդութիւնների

ԲԺԻՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ

ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ, 5—7 ժ.։ Երեւանեան հրապարակ. տ. Խարազանի. Роиновъ-ի լուսանկարչական գործարանի տակը։ Эриванская площадь, домъ Харазова. (Ե. Հ. Չ. 23—25

Զգուշացէք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Գ. Ֆ. ԻՒՐԳԷՆՍ

Ոչնչացնում է պեպէնները, սեւութիւնը, դեղին բծերը, պուզիկները եւ պտուկները եւ ներգործում է աւելորդ քրտնելու դէմ։ Խորհուրդ է տրվում ձեռք բերել, որպէս տուալէտային անուշահոտ սապօն, բարձր արժանաւորութեան։

ՈՍԿԷ ՄԷԴԱԼ 1893 թ-ի համար։

Կտորի գինը 50 կ., ½ կտորի 30 կ.։

Ծախվում է բոլոր ամենալաւ գեղագործական մագազիններում եւ դեղատներում։

Գլխաւոր պահեստը ամբողջ Ռուսաստանի համար Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մօսկվայում։ Դէպօ, Թիֆլիսում, Ագմուրովի մօտ, գեղագործական ապրանքների առեւտրի կովկասեան ընկերութեան մէջ, Ծուրինովի եւ Գրիվնակի, պ.պ. Պոպօվների եւ Արիստակովի մօտ։ M. 192812 8—24

ԱՄԵՆԱՑԱՑՏԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ՐՕՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ

ՖԻՍ-ԳԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԳԻԹԱՌՆԵՐ, ՖԼԻՑՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁԱՅՆԱԽԱՋԵՐ, ԼԱՐԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ։



Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս-մաս։

ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆ ուղարկվում է ձրի։

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱՋԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ-ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ

ԴԷՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան

Музыкалное депо Б. М. Мириманіана, ТИФЛИСЪ.

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
18—20

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՍՐԱՆ

Շաբաթ, հոկտեմբերի 21-ին, երեկոյեան 10 ժամին, նշանակված է Թիֆլիսի ժողովարանի պ.պ. անդամների ընդհանուր ժողովը։

Զբաղմունքի առարկաներն են՝ 1) փոխառութիւն պահեստի դրամագլխից որոշեալ գումարի ժողովարանի կարիքների համար. 2) ժողովարանի անդամներից մէկի վարմունքի մասին. 3) աւագներից մէկի հրաժարականը աւագի պաշտօնից. 4) թեկնածուների քուէարկութիւն։ (Ե. Հ. Չ.) 3—3

Վիէննայում լոյս տեսաւ

„ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻՆ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՆ“

I մաս

Կիլիկիայի քարտէզով, Զէյթունի յատակագծով, Զէյթունի տեսարանով եւ զէյթունցի կարիճի պատկերով։

Գինը 1 ր. 50 կ. կամ 3 ֆրանկ 75 ս.

(Ճանապարհածախքով 1 ր. 75 կ. կամ 4 ֆր.)

Դիմել Ռուսաստանից՝ Тифлисъ. Центральная книжная торговля, իսկ արտասահմանից Mechitharisten—Buchdruckerei, Wien, VII/₂, Mechitharistengasse 4.

(ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ՍԱԿԱՒԱԹԻՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ)

(Հ. Հ.) 17—20

Թիֆլիսի Նաւարդիւնաբերական ընկերութեան

վարչութիւնը յայտարարում է ի գիտութիւն պ.պ. բաժնեէրերի, որ կիրակի օրը, հոկտեմբերի 22-ին, առաւօտեան 10 ժամին, քաղաքային տան դահլիճում նշանակված է

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Զբաղման առարկան.—

Վարչութեան զեկուցումը՝ տէրութեան նոյեմբերի 15-ին նշանակված աճուրդներում մասնակցելու առիթով նաւթահանքային նոր հողաբաժիններ ձեռք բերելու համար եւ նրանց մշակման հարցը։ (հոկտ. 6-ին, 15-ին եւ 22-ին) 2—3

ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ

Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

(Գոյ. VIII-րորդ տարին. Թիֆլիս, Կուկիա, Тургеневская ул. № 5)

Բաղկացած է երկու պատրաստական դասարաններից, որոնք իրանց դասընթացով համապատասխան են պետական միջնակարգ դպրոցների նոյն դասարաններին։ Դպրոցում աշակերտները պատրաստվում են գիմնազիաներ, բէալական եւ այլ պետական վարժարաններ մտնելու համար։ Աշակերտները ընդունվում են իբրեւ գիշերօթիկ, ցերեկօթիկ ու երթեւեկներ։ Կովկասի ուսումնարանական վարչութեան թոյլատրութեամբ ընդունվում են նաեւ բոլոր կառավարչական դպրանոցների ստորին դասարաններից աշակերտներ՝ իրանց դասերի վերակրկնութեամբ հանդերձ։ Վարժարանում աւանդվում են նաեւ կրօն, հայոց լեզու, ֆրանսերէն լեզու եւ համառօտ հայրենագիտութիւն՝ փորձված ու հմուտ դասատուների ղեկավարութեամբ։

4—4 (Հ. Հ.) Դպրոցի կառավարիչ՝ Յ. Ղարագեօզեան

Անդրկովկասեան Նաւարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

սկսելով իր գործունէութիւնը, սրանով յայտարարում է, որ առաջին վճարը ամեն մի մասի 5% որ է տասն ռուբլի նշանակած է այս ամսի հոկտեմբերի 14 մինչեւ 18, իսկ երկրորդ վճարը 10%, որ անում է քսան ռուբլի, նշանակած է նոյեմբերի 1-ից մինչեւ 5-ը։

Փողերի ընդունելութիւնը լինելու է վարչութեան գրասենեակում (Пушкинскій Пассажъ верхній этажъ (отъ 10-и часовъ до 2-хъ)։

(13, 15 եւ 17 հոկ. 1, 3 եւ 5 նոյ.) 2—6

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, 25 հոկտեմբերի 7 նոյեմբերի—չոգենաւ՝ ՍԻՐԿԱՍԻ, կապիտան ԳԱՐՐԻԳ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտվերպէնի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. Խօջափարուխովի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԳՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի, № 27։ ՆՈՎՈՐՕՍՍԻՅՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. Հ. Չ.) 5—20

Дозволено цензурою, Тифлисъ, 13 Октября 1900 г. Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27.